

1566

Изображение

Чертёж сечений

Чертёж сечений
и расположения

$\frac{51}{U-17}$

1933

20 MAY 2010

27 JUN 2005

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԶՅՈՒԱԾՐԿ ՄԱՆԿԱԳՈՒՅՑԵԶԻ
ԴԵԿԱԳՐԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՏ Ա. ՍԱՄՎԵԼՅԱՆ

51
0-17

ՅԵՐԵՎԱՆ

ԳԵՏՃՐԱԾ ՈՒՍՄԱՆԿՐՈՑՔԱԺԻՆ

1983

17 SEP 2016

1566

51
U-17

ՑԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մինչև Համկոմկուսի հենտկոմի 1931թ. անդամնաբերի 5-ի պատմական վորոշումը մենք չունեյինք մաթեմատիկայի վորոշ ծրագիր նախադպրոցական հիմնարկների համար։ Այդ առարկան կամ մոռացության եր տրվում, կամ անց եր կացվում առանց վորում սիստեմի և ծրագրի՝ ինքնահոսի մատնված։

Ներկայումս, յերբ մենք կառուցում ենք պոլիտիկանիկական դպրոց, ավելի ևս անհրաժեշտ և մատադ հասկելոց զարգացնել յերեխաների մաթեմատիկական ունակությունները։

Բոլոր աշխատանքներն այս ասպարիֆում պետք են նենամ յերեխայի աչքում վորոշ նպատակադրում, այդ ժամանակ միայն յերեխան կհասկանա մաթեմատիկայի կենսական արժեքը։


Մանկապարտեղը նպաստած կլինի պոլիտեխնիկան, յեթե սովորեցնի յերեխաներին գործադրել իրենց գիտցածը կյանքում, սովորեցնի մաթեմատիկայի ողնությամբ ավելի ռացիոնալ կերպով կազմակերպել իրենց աշխատանքը, սովորեցնի հաշվել, չափել, կըսել գծել։

Զեռնարկը կազմելիս ոգավել ենք՝

1. Блехер. — «Научимся считать»
2. Тихеева, Морозова. — «Счет в жизни маленьких детей»
3. Глаголева. — «Математика в нулевых группах»
4. > . — «Математика на детской площадке»
5. Шемянов. — «Математическая лаборатория»

Ա. ՍԱՄՎԵԼՅԱՆ

Անդ. նախ. Հ. Գեորգուանի Տիկ խմբ. Գ. Զեն-
յան Սրբագրիչ Վ. Տերյան. Պետերասի-
ապարան Յերվան. Պատվեր 2154 Գրա-
մա 8326 (բ) Հրատ. 2737 Տիրամ 1000



ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ՆԱԽԱԴՐՈՑԱԿԱՆ ՀԽՆԱՐԿՈՒՄ

Ժամանակակից մանկավարժությունը ձգտում է պնել յերեխային այնպիսի պայմանների մեջ, վոր նա իր շրջապատի հետ բնականորեն ծանոթանալիս, ձեռք բերի վորոշ գիտելիքներ և ունակություններ։ Այդ ըմբռնումներն այն սերմերն են, վորոնցից պետք է ծընունդ առնեն հետազայում նրա գիտելիքները։ Միայն թե այդ ըմբռնումը նա ձեռք պետք է բերի առանց կողմ նակի ճնշման (բնականորեն)։ Ինչպես բնականորեն յերեխան սովորում է խոսել, նույն ճանապարհով նա պետք է ձեռք բերի մաթեմատիկական ունակություններ և գիտելիքներ։

Խոսելով մաթեմատիկայի մասին, մենք չպետք ենք առանանք, վոր այդ հասկացողության մեջ մտնում են վոչ միայն հաշիվը, այլև մի շարք տարրական մաթեմատիկական հասկացողություններ և ունակություններ, որինակ՝

1. Տարածական կողմնորոշում (աջ, ձախ, հետ, առաջ, մոտ, հեռու, կողքին, շուրջը, մեջտեղը, սկիզբը, վերջը)։

2. Ժամանակի կողմնորոշում (հիմա, հետո, առավոտ, գիշեր, իրիկուն, այսոր, վաղը, յերեկ, ժամուր, գեկադ, ամիս, տարի գարուն, աշուն...ուշ կանուխ (ժամացույց, որացույց)։

3. Մեծության հասկացողություն (մեծ, փոքր, հասկասար, բարձր, ցածր, յերկար, կարճ, հաստ, բա-

բակ, լայն, նեղ, խորը, ծանծաղ, ծանր, թեթև, արագ
դանդաղ, ուժեղ (թույլ):

4. Զեեր (կետ, գիծ, շրջան, կիսաշրջան, քառան-
կյուն, քառակուսի, յեռանկյունի, գունդ, խորա-
նաբդ):

5. Թիվ և դործողություն-շատ, քիչ, մեկ, վոչինչ
թվերի ըմբռնում և դումարում ու հանում 10-ի շրջա-
նում, ամբողջ և մաս (կես, քառորդ):

6. Չափեր և չափումներ-դրամներ՝ պղնձի և ար-
ծաթի՝ մեկ կոտ., 2 կոտ., 3 կոտ., 5 կոտ., 10 կոտ., 20
կոտ., 1 ոռուք., մետր, սանտիմետր, կիլո, կես կիլո,
լիոր:

Այս բոլոր մաթեմատիկական կողմնորոշումները
պետք են ոգնեն յերեխաներին կազմակերպելու իրենց
կյանքը: Մաթեմատիկան և թվական մտապատկերնե-
րըն ըմբռնվում են ավելի շուտ, քան թե դրագիտու-
թյունը: Մարդ կարող է լինել անգրագետ, բայց չի կա-
րելի յերեխակայի նորմալ մարդ, թեկուզ յերբեք դըպ-
րոց չդնացած, վորը զուրկ լինի իր կյանքի համար ան-
հրաժեշտ մաթեմատիկական և թվական մտապատկեր-
ներից:

Յերեխաները հաշվում են մատներով գեռ այն
ժամանակ, յերբ գրագիտության մասին խոսք լինել չի
կարող: Յերեխան դալիս ե մանկապարտեղ վորոշ մա-
թեմատիկական պաշարով: Այս պաշարը նա ձեռք բե-
րած է լինում գործնականորեն իր ընտանեկան միջա-
վայրում:

Յերեխան գիտե, վոր ունի մի բերան, յերկու աչք.
նա գիտե՝ ինչը մոտ ե, ինչը՝ հեռու. նա գիտե, վոր
կառը չափում են մետրով, կաթը՝ լիտրով. նա ճանա-

չում և դրամները. խաղի ընթացքում գործադրում ե
հաշիվը՝ դրոշակներ բաժանելիս, դույզով կանգնելիս
և այլն:

Այդ գիտելիքները պատահական են, վոչ սխատեմա-
տիկ և գեռ բավականաշափ իմաստավորված չեն, բայց
մեծ նշանակություն ունեն և պետք ե հիմք ծառայեն
հետագա սխատեմատիկ աշխատանքների համար: Շատ
անգամ յերեխաները այս կամ այն թվի անունն են տա-
լիս, բայց պարզ կերպով չեն պատկերացնում առաջկա-
ների քանակը, վոր կապված ե հենց այդ թվի հետ:

Նկատի ունենալով, վոր յերեխան իր սկզբնական
փորձը հաշվի ասսղարիղում ձեռք ե բերում գործնական
կյանքից, այդ իսկ պատճառով նախաղպրոցական հա-
սակում հաշվի ունակությունները պետք ե ձեռք բերվեն
և զարգանան գործնական աշխատանքի միջոցով:

Հաշիվը պետք ե կապված լինի յերեխայի գործնա-
կան կյանքի պահանջների հետ: Նա պետք ե սովորի իր
կյանքի ամենահսապարակ յերեռությունները ձեւակերպել թը
վական հասկացողությունների միջոցով:

Նա պետք ե հասկանա, վոր հաշիվն ողնում ե իրեն
անհրաժեշտ ե իր համար: Այդ պատճառով շտա սխալ
կլինի, յեթե մանկավարժը մաթեմատիկայի վրա նա-
յր ձևական զարդացման մի միջոցի վրա (ուղեղի մար-
զանքի), առանց ուշադրություն դարձնելու նրա բովան
դակության կենսական արժեքի վրա:

Մանկ, հիմնարկում պետք ե շտա համախ յերեխան-
ների առաջ դնել հաշվելու, չափելու, կըսելու անհրա-
ժեշտություն:

Մենք գիտենք, վոր նախաղպրոցական հասակի յե-
րեխան մտածում ե կոնկրետ մտապատկերներով, այդ

պատճառով ել թե խոսքը և թե հաշվվը պետք է կուզ-
ված լինեն առարկաների կոնկրետ քանակի հետ, յերե-
խայի գործունեյության հետ, ձուլվեն նրա բոլոր աշ-
խատանքների մեջ: Յերեխաներն սկզբնական շրջանում
պետք է հաշվեն առարկաներ, հետո պայմանական նը-
շաններ և ապա անցնեն թվանշանների: Թվանշանները
տրվում են միայն այն ժամանակ, յերբ ամեն մի թվի
հետ յերեխան պատկերացնում է վորոշ քանակությամբ
կոնկրետ առարկաներ. նոր թվական հասկացողու-
թյունները կամ գործողությունը, պետք է ընթանան
հետեւյալ հաջորդականությամբ.

ա . . Հաշվել կոնկրետ առարկաներ.

բ . Առարկաները փոխարինել պայմանական նշան-
ներով.

գ . Նշանները փոխարինել թվանշաններով.

դ . Վերացական հաշվի անել:

Վորպեսզի մաթեմատիկական հասկացողություն-
ները ամբողջացվեն և զարդանան անհրաժեշտ սե-
զոնային կյանքի և յերեխաների կազմակերպչական աշ-
խատանքի հետ կապ ունեցող խնդիրներ տալ:

Նախադպրոցական հիմնարկում մաթեմատիկան
սիստեմատիկ պարապմունքի բնույթ չպիտի ունենա-
(դպրոցի իմաստով): Հաշվի սովորեցնելու համար
պետք է ստեղծել համապատասխան պայմաններ, հաշ-
վելու դրդապատճառներ, վորպեսզի յուրաքանչյուր յե-
վելու ընդունակությունը զարդանա ինտենսիվ, բը-
րեխայի ընդունակությունը զարդանա ինտենսիվ, բը-
նական կերպով, առանց կողմնակի ճնշման: Այդ պայ-
մաններում բոլոր յերեխաների գիտելիքները հավասար
չեն լինի, յերեխաների զարդարումը կընթանա անհա-
չեն լինի, յերեխաների զարդարումը գեկավարին: Միակ
տորեն, բայց այդ չպիտի վախեցնի գեկավարին:

Էլւա մանապարհն այն ե, վոր յերեխան ըմբռնի այն
չափով, ինչ չափով կարող ե մարսել նրա ուղեղը: Յեր-
բեմն մանկապարտեզում գործադրվում են դպրոցական
մեթոդներ (արվում են հատուկ թվաբանական դասեր),
վորոնցից պետք ե միանդամայն համարվել. բայց ա-
վելի հաճախ մաթեմատիկական ուղղություններ գար-
գացնող աշխատանքը մատնված ե մոռացության և յե-
րեխաների այդ ունակությունները զարդանալու վո-
խարեն բժանում են:

Ըստ իր հասակի, ամեն մի յերեխա պետք է ունե-
նա մաթեմատիկական գիտելիքներ, կողմնորոշումներ
և ունակություններ:

Ստորև տալիս ենք այն գիտելիքների, կողմնորո-
շումների և ունակությունների ծրագիրն ըստ հասակի:

1-ԻՆ ԽՈՒՄԲ

1. Քանակություն և հաշվի: Հասկացողություն
շատի եքչի մասին: Բմբռնել 2, 3, 4, առարկաներից
կազմված խումբ: Անվանել այդ խմբի քանակը համա-
պատասխան թվական անունով՝ 2, 3, 4, հաշվել մինչեւ
3 նկարների միջոցով, վորոնք պատեհականում են յերե-
խաներին լավ ծանոթ առարկաներ:

2. ՄԵծություն

Մեծ-վորքը, ավելի մեծ, ավելի վրաքը, յերկար-
կարճ, ավելի յերկար, ավելի կարճ, հաստ-բարակ, ա-
վելի բարակ, ծանր, թեթև, ավելի ծանր, ավելի թե-
թև, արագ-զանդադաղ, ավելի արագ, ավելի զանդադ:

3. Տարածություն

Ճշգրիտ տարբերել հետեւյալ հասկացողություննե-

բը՝ առաջ, հետ, հեռու, մոտիկ, կողքին, մեջոնը,
վերև, ներքեւ, վերևում, ներքեւում:

4. Ժամանակ.

Հասկանալ և ճիշտ գործածել հետեւալ հասկացու-
ղությունները՝ հիմա-հետո վաղ-ուշ, առաջ-հետո, ա-
ռավոտ-իրիկուն, ձմեռ, ամառ:

5. Զեկեր.

Ծալալ ունեցող մարմինների ձևի ըմբռնում՝ դռնդ-
խորանարդ և չըջան՝ հարթության վրա: Ճանաչել այդ
ձևերը և խմանալ նրանց անունները: Այդ ձևերի ոգտա-
գործումը խաղի և աշխատանքի ընթացքում:

2-ՐԴ ԽՈՒՄԲ

1. Քանակություն և հաշիվ.

4-5 առարկաների խմբակի ըմբռնում: Թվապատ-
կերների ըմբռնում 6-ի չըջանում: Լսողությամբ վորո-
շել հնչյունների, զանդի, զարկերի թիվը: Հաշիվ 10-ի
շել շըջանում՝ կոնկրետ առարկաներով: Գիտենալ թվերի
չըջանում՝ կոնկրետ առարկաներով: Գիտենալ փորձը 6-ը
կաղմը 6-ի չըջանում (այսինքն գիտենալ, վոր 6-ը բաշ-
կացած և 5-ից և 1-ից, 4-ից և 2-ից, 3-ից և 3-ից):
Կացած և 5-ից և 1-ից, 4-ից և 2-ից, 3-ից և 3-ից):

Գաղափար զույգի մասին: Տարբերել 1, 2, 3, 5 և
10 կոպեկանոց դրամներ: Գիտենալ թվանշանները մին-
չել 5, տալ նրանց անունները:

2. Մեծություն.

Բարձր-ցածր, ավելի բարձր, ավելի ցածր, լայն-
նեղ, քիչելի լայն, ավելի նեղ և նույնը՝ ինչ 1-ին խըմ-
բռում:

3. Տարածություն

Եռևյալ՝ ինչ 1-ին խըմբռում, այլև-շուրջը, դիմա-
բը, մեջտեղը, աջ ձախ:

4. Ժամանակ.

Նույնը՝ ինչ 1-ին խմբռում, այլև-ձմեռ, ամառ,
գարուն, յերեկ-գիշեր, այսուր, յերեկ, վաղը:

5. Զեկեր.

Նույնը՝ ինչ առաջին խմբռում, այլև հետեւալ ծա-
նոթությունները յետանկյուն, քառանկյուն, (օ ծայ-
րով ասող) հնդանկյուն, կիսաշրջան: Ճանաչել և ան-
գանել այս ձևերը:

3-ՐԴ ԽՈՒՄԲ

1. Քանակություն և հաշիվ.

Քանակական հաշիվ մինչև 20 կոնկրետ առարկանե-
րով: Բանավոր հաշվել ըստ կարգի՝ մինչև 10-ը և հետ
10-ից 1-ը:

Գործարում 10-ի չըջանում-կոնկրետ առարկա-
ներով: Հանում 10-ի չըջանում-կոնկրետ առարկանե-
րով:

Գաղափար տասնյակի մասին:

Հասկացողություն՝ կենտ և զույգ, իմանալ, վոր
փողոցի մի կողմը կենտ համարներ են, մյուս կողմը՝
զույգ համարները:

Գիտենալ իր տան ու բնակարանի նոմերը:

Դրամներ՝ նույնը այլև-20 կոպ. 1 ու.

Ծանոթություն՝ ½, ¼-ի:

Խողիրներ մի գործողությունով, 10-ի չըջանում

2. Մեծություն.

Նույն հասկացողությունները, այլև-խորը-ծան-
ծաղ, ավելի խորը, ավելի ծանծաղ. ծեր, յերիտասարդ
ավելի յերիտասարդ:

3. Տարածություն

Նույնը՝ ինչ նախորդ խմբերում։ Անցածի կրկնություն, յուրացնել փողոցով գնալու կանոնները՝ ա. մի ման զա փողոցի մեջտեղով, այլ մայթով, բ. միշտ քայլիր մայթի աջ կողմով, գ. փողոցն անցնելուց առաջ սկզբից նայիր դեպի ձախ, հետո դեպի աջ։ Կարող դանալ ովտագործել այդ կանոնները։

4. Ժամանակ.

Տարվա յեղանակներն ըստ Հաջորդականության։ Գիտենալ ամէսը և ամսաթիվը։ Կարողանալ ոգտվել գամացույցից։ Իրավեկ լինել կարմիր որացույցի որերին՝ ա) 7 նոյեմբերի-Հոկտեմբերյան հեղափողի որերին՝ բ) 21 հունվարի-Լենինի մահվան տարեղարձը. գ) 23 փետրվարի կարմիր բանակի տոնը. դ) մարտի 8-ը և մայիսի 1-ը։

5. Չափումներ

Մանոթություն մետրի և սահմետետրի հետ։ Կարողանալ չափել։ Գիտենալ կիլոն, կես կիլոն, կարողարողանալ չափել։ Գիտենալ կիլոն, կես կիլոն, կարողարողանալ չափել։ Կարողանալ ոգտվել չերմաչափից, նաև կշռել կշռողով։ Կարողանալ ոգտվել ջերմաչափից, նաև կորոչել ողի ջերմությունը, գիտենալ իր քաշը և հասակը։

Իր հասակին համապատասխան թվական մտապատճեները յերեխան կյուրացնի իր միջավայրից, պատճեները յերեխան կյուրացնի իր միջավայրից, կորին նաև ակտիվ կերպով մասշվագատող կյանքից, պարին նաև ակտիվ կերպով մասնակցում ե։

Այդ մասնակցությունն արտահայտվում ե խաղի աշխատանքի միջոցով։ Աշխատելիս և խաղալիս յերեխան անպայման հաշիվ կսովորի, յեթև մենք՝ մեծերս լինենք նրա աննկատելի առաջնորդները։

Դիտելով ընջապատող կյանքը, ծանոթանալով նըրան իր զգայարանների միջոցով, յերեխան ինքն այս-

արձանաբար կուտակում ե ժուապատկերների պաշտը, նա սովորում ե։ Խոսքն այն ֆակտորն ե, վոր իմաստավորում ե նրա ժուապատկերը։ Ապրելով յերեխանների հետ, զեկավարը պետք ե ոգտվի հանգամանքից և խոսքը տա նրանց-նոր տպավորության հետ կապակցված։ Հաշիվը ձուլվում ե բոլոր աշխատանքների հետ՝ ձեռարվեստի, ինքնասպասարկման, բնության մեջ աշխատելու և այլն։

Կյանքը, բնությունը տալիս են անսպառ նյութ ժաթեմատիկական խնդիրների համար։ Յեթե յերեխան ճշշտ ըմբռնի առաջին տասնյակն, ուղեղի այն ճանապարհով, վորոնցով պետք ե ընթանա նրա բնական մաթեմատիկական մտածողությունը, հետաջայում այդ հիմք կծառայի նրա զարգացման և հառաջադիմության համար։

Ինչ հիմունքներով ե կատարվում թվերի ըմբռութը։

Մանկավարժ Պեստալոցին գտնում ե, վոր թվական ժուապատկերների ըմբռնումը կարող ե իրացործվել միայն իրազննական մեթոդով։ Թվի ըմբռնումը յերեխան պետք ե ձեռք բերի կյանքի մեջ անբաժան կոնկրետ առարկայից։ Զպետք ե մոռանալ, վոր ինչքան շատ ըդպայարաններով ե ըմբռնում յերեխան թիվը, այնքան թիվը լավ ե մնում նրա հիշողության մեջ։ Այդ պատճառով պետք ե մասնակից դարձնել ինչքան կարելի յեշատ զգայարաններ՝ լսողությունը, տեսողությունը, շատ զգայարաններ, ծանրության և ջերմության զգայարանը ները։

Այդ տեսակետից մեծ արժեք ունի լարորատոր մեթոդը, վորի կիրառման ժամանակ յերեխան հաշվում,

շափում, կշռում, հետազոտում և հանում և իր յեզրա-
կացությունները:

Լաբորատոր մեթոդով՝ յերեխան ձեռք ե բերում
գիտելիքներ ինքնուրույն, ակտիվ գործունեյության
միջոցով, իսկ մենք գիտենք, վոր այդ միջոցով ձեռք
բերածն ավելի յե ամրապնդվում նրա ուղեղում:

Փոքր հասակից յերեխային պետք ե ծանոթացնել
կշռքի, ջերմաչափի հետ:

1. Այսպիսով՝ յուրաքանչյուր մաթեմատիկական
պատկերացում պետք ե իր հիմքում ունենա յերեխայի
կոնկրետ փորձը:

2. Յուրաքանչյուր կենսական փորձից ստացված
պատկերացում պետք ե ձևակերպված լինի խոսքի մի-
ջոցով, վորովհետև խոսքն իր ժամանակին կապված
մաթեմատիկական պատկերացման հետ ճշգրտում ե
վերջինը:

3. Յերեխան միջոց պիտի ունենա գործադրել ստա-
ցած գիտելիքները և ունակությունները կյանքում խա-
զի և աշխատանքի ընթացքում:

Բացի այն նյութերը, վոր տալիս ե ինքը կյանքը,
շրջապատը, թվական հարաբերությունները զննելու
համար անհրաժեշտ են առարկաներ: Այդ առարկանե-
րը, նյութերն անհրաժեշտ ե մացնել նախադպրոցական
հիմնարկ: Նրանք պետք ե մոտ լինեն յերեխային, բազ-
մազան և հետաքրքիր, նրանց միջոցով կարելի յե ան-
նկատելի կերպով զարգացնել յերեխայի հաշվելու ու-
նակությունները: Հաշվելու առարկա կարող են լինել
լուցկիները, լորին, կոճակը, խեցիները, խցանները,
խողակաղինը, մասուրը, կավից կամ հացից շինած ու
ներկած գնդիկները: Ամեն մի ունակություն զարգա-

նալու համար կարիք ունի վարժությունների և ինչքան
թույլ ե այդ ունակությունը, այնքան շատ վարժու-
թյուններ են պահանջվում: Կենսական փորձը տալիս ե
մտապատկերներ, բայց շատ հաճախ փորձը բավական
չե պետք ե նրան ոգնության դաշտը, նյութեր տակ՝ ըն-
դունակությունները վարժեցնելու և գիտելիքները սիս-
տեմի բերելու: Այդ կարելի յե իրազործել չնորհիվ մի
շարք դիդակտիկ նյութերի, սեղանի խաղերի, լուսոնե-
րի: Յերբեմն այդ լուսոնները կարող են պատրաստել ի-
րանք՝ յերեխանները, զեկավարի ոգնությամբ:

Լուսոն կամ խաղը սկզբից պետք ե խաղա յերեխայի
հետ ինքը զեկավարը, հետո յերեխանները կարող են
խաղալ ինքնուրույն խմբերով: Յեթե յերեխան չի հա-
կանում առաջադրած խաղը, չպետք ե ճնշում գործադր-
րել, վոր նա անսպայման զբաղվի այդ խաղով:

Փոքրերի խմբակում այդ դիդակտիկ նյութերը հա-
մեստ տեղ են բռնում, մինչդեռ 2-րդ և 3-րդ խմբերում
նրանք պետք ե լինեն ավելի բազամազան և զործադրը-
վեն ավելի հաճախ: Զեկավարը պետք ե այնպես կազ-
մակերպի աշխատանքն այդ ոժանդակող նյութերով,
վոր յերեխան ինքնուրույն կերպով ամրապնդի ստա-
ցած մաթեմատիկական ունակությունները և գիտելիք-
ները:

Ի՞նչ միջոցներով ե տալիս զեկավարն անհրաժեշտ
գիտելիքները: Փոքր խմբերում՝ 1. կազմակերպում ե
հետազոտություններ հիմնարկում և եքսկուրսիաների
ժամանակ: որինակ, յերեխանները հաշվում են քա՞նի
ճագար կա վանդակում, հալեւը որական քա՞նի ձու յեն
ածում, քա՞նի ծառ կա տան առաջ և այլն:

2. Տալիս են հանձնարարություններ.

3. Հարցեր ե առաջարկում՝ վրաքան (թիվը վորոշելու համար) և ինչպիսի (մեծությունը վրոշելու համար), վորպեսզի յերեան բերի յերեխաների կողմէնորոշումները:

4. Զրւոյցներ ե կազմակերպում պատկերների վրա թվական հարաբերությունները վրոշելու համար:

5. Լայն չափով ոգտագործում ե յերաժշտական-սկզբանական աշխատանքները տարածության կողմնորոշումներ տալու համար: Թվերի պլանում դեկավարը պլանավորում ե մաթեմատիկական աշխատանքը, բայց այդ խմբում խոսք չի կարող լինել մաթեմատիկայի հատուկ պարապունքների մասին: Աշխատանքը տարվում ե որգանաւես կամրված հիմնարկի աշխատանքների բովանդակության հետ:

Յերկրորդ (Յ տար.) խմբում մեթոդները մնում են նույնը, միայն այստեղ ավելի յերեան ե գալիս յերեխաների ձեռներեցությունը, այստեղ յերեխաներն իրանք ուշադրություն են դարձնում դեպի առարկաների ձեռք, քանակը, մեծությունը: Դիդակտիկ նյութերը շրջակառ պետք ե լինեն ավելի բազմազան:

Այս խմբակում դեռ ևս չի կարելի զատել մաթեմատիկան իրեք առարկա, այլ պլանավորելիս պետք ե նըկատի ունենալ, որ նա ձուլվում ե բոլոր աշխատանքների հետ:

Բարձր խմբում կիրառվում են նույն մեթոդները, բայց այստեղ կան ամելի մեծ հարաբերություններ, բորովին կատարելու յերեխաներն ավելի պատրաստված են, կավորովին կատարելու դիմումը կարող է լինել կյանքում:

Այս խմբում արդեն կարելի յե ունենալ մաթեմատիկայի հատուկ պարապունքներ, հատկացնել հա-

տառի ժամերը: Յերեխաների ակտիվությունը յերեան ընթացակարգությունը դիդակտիկ նյութ՝ կազմակերպված աշխատանքների համար: Տասնորյակում կարգի յե ունենալ 5-6 պարապունք 25-30 բոլե տեղողությամբ, այն ել յեթե տրվեն դիդակտիկ նյութերը: Յերեխաներին ծանրաբեռնել չի կարելի աչքի առաջ ունենալու 7 տարեկան հասակի առանձնահատկությունները:

Սնկասկած չպիտի աչքաթող արվի հիմնական սկզբունքը՝ մաթեմատիկան ճանաչել ամբողջ աշխատանքների անբաժան մասը:

Վորպեսզի յերեխան կարողանա ճիշտ ըմբռնել վրայ մաթեմատիկական համկացողություններ և թվեր, կարելի յե առաջարկել հետեւյալ դիդակտիկ նյութերը:

1. Մեծի-փոքրի գաղափարը յուրացնելու համար փոքր յերեխաներին տալիս են ժողովածու (հածօր) դանազան մեծության առարկաների-խաղալիքների, որինակ՝ փայտից շինած (միենույն գույնով ներկած) թասեր-զանազան մեծության, վորոնք տեղավորվում են մեկը մյուսի մեջ:


Կամ ստվարաթղթից, Փաներից պատրաստած խորանարդներ՝ մի կողմից բաց, վորոնք մտնում են մեկը մյուսի մեջ:

Յերեխան խաղալիս դասավորում ե այդ իրերն ըստ մեծության: Նույն նպատակին կարող են ծառայել նաև շատ տարածված բուրգերը: Յերեխաները կարող են իշտարական պատրաստել ժողովածու զանազան մեծության բենք պատրաստել դիմումը կարող է լինել կոճակներից, զնդակներից, տերեկներից:

Աշնանը յերեխաները կարող են հավաքել և չորացնել մի տեսակի ծառից զանազան մեծության տերեկներ



ու կպցնել տախտակի վրա ըստ մեծության։ Կույն
տերևները կարելի յեր կպցնել 10 առանձին քարտերի
վրա, հետո յերեխաներն իրենք շարում են քարտերն
ըստ քանակի (մեկ, յերկու և այլն)։




նկ. 1

2. Լայն և նեղ։ Յերեխաները սովորաթղթից
պատրաստում են 10 սմ։ յերկարությամբ և զանազան
լայնության չերտեր միենալուն դույնի թղթից, վոր
կարելոցնում ու դասավորում են ըստ լայնության։ Կարե-
լի յի պատրաստել զանազան լայնության ժապավեն-
ների ժողովածու։

3. Հաստ և բարակ։ Պատրաստել ժողովածու զա-
նազան հաստության մեխերի (ցանկալի յե՞ նույն յեր-
էարության), ձողերի, գրքերի, թելերի, կտորեղենի,
թղթի։

4. «Բարձր և ցածր» հասկացողությունն ամրապն-
դելու համար նպատակահարմար են՝ Փաներից պատ-



նկ. 2

րաստած ծառերի, տնակների, պիոներների, կարմիր բա-
նակայինների նկարներ։

Կարելի յե 30 քառ. սմ. տախտակը ծածկել պլաս-

աելինով (կամ կավով) և պլաստելինի մեջ կանգնեց-
նել զանազան բարձրության ձողիկներ, գլաններ :

5. «Կկու» խաղ : Այս խաղը տրվում է փոքր յերե-
խաներին ստուգելու համար, արդյոք տարրերում և



Ակ. 3

յերեխան նկարի վրա յեղած առարկաները : Խաղը պատ-
րաստվում է այսպես : Ստվարաթղթից կտրվում է քար-
տեր, վորոնց վրա կացնում են նկարներ (ցանկալի յե-
պարզ և գունավոր), ամեն մի նկարը կրկնվում է յեր-
կու անգամ, միայն «կկուն» մենակ է : Քարտերը բա-
ժանվում են յերեխաներին՝ համասար չափով : Յերե-
խաները միացնում են նույն նկարն ունեցող քարտերը
և դուրս հանում : Այնուհետև յերթով տալիս են հա-
րեվանին քարտերից մեկը դուրս քաշելու . յեթե դըտ-
նըվում է քարտերի դույզը, միացնում և դուրս են հա-


նում : Խաղը շարունակվում է, մինչև մեկի ձեռքն թը-
նում ե «կկուն» : Այդ յերեխան «կկուն» է :

Կարելի յե առաջարկել, վոր նա կկույի նման կան-
չի :

6. Տարածական կողմնորոշումներն յուրացնելու
սպասակով կարելի յե տալ հետեւյալ շարժական խա-
ղը :

Շրջանների խաղը .

Ղեկավարն առաջարկում է յերեխաներին խա-
ղալ շրջանների խաղը և կատարել իր ասածը : Նա նշում



Ակ. 4


և գետնին մի կետ, տալիս յերեխաներից մեկի անունը
և առաջարկում ե կանգնել կետի վրա, կանչում և մյու-
սին, առաջարկում ե կանգնել ընկերոջ առաջ . կանչում
և յերրորդին, առաջարկում ե կանգնել առաջնի հետեւ,
չորրորդը և հինգերորդ կանգնում են առաջնի աջ և
ձախ կողմերին՝ ըստ զեկավարի ցուցմունքի : Այսպի-
սով հավաքվում են 5 յերեխա : Այնուհետև զեկավարը
մի քանի տեղ նորից կետեր ե զնում : Յեթե դրել ե 4
կետ, միանգամից ել կանչում ե 4 յերխա և հրաման տա-
կիս՝ «կանգնել կետերի վրա» : Հետեւյալ չորս յերեխա-

ները կանգնում են կանչվածների առաջը, մյուս չորս՝ նրանց հետեւ և այլն: Այսպիսով կազմվում ե 4—5 խումբ յուրաքանչյուր խմբում 5-ական յերեխա: Այսուհետեւ դեկավարը հրաման ե տալիս՝ «Հղթա կազմեցեք»: Չորսը շրջան են կազմում, խակ մեկը, վորը կանգնած ե կետի վրա, մնում ե շրջանի մեջը՝ և աշխատում ե դուրս գալ, բայց ընկերները ձևոները բարձրացնելով և իջեցնելով՝ խանդարում են նրան: Յեթե նրան հաջողվում է փախչել շրջանից, յերեխաներից մեկը կանգնում ե նրա տեղը:

Այս խաղն ողնում է՝ յուրացնելու և ամրապնդելու «առաջ, հետեւ, կողքին, աջ, ձախ», հասկացողությունները:



7. Դեկավարի ողնությամբ յերեխաները կարող են պատրաստել հաշվի պլակատներ, որինակ՝ նկար: 5

8. Զերբին ծանոթանալու համար կարելի յե առաջարկել, «մողայիկա» խաղը: Ֆաները կտրվում ե զա-



նկ. 5

նաղան ձեռութ-քառակուսի, յեռանկյունի, շրջանաձեվ, կիսաշրջան և այլն, ներկվում ե դունեղ ներկերով: Յերեխաները կտրըներից կազմում են գեղեցիկ




նկ. 6

կամբինացիաներ կամ տալիս են ծանոթ առարկաների ձևեր:

9. Հաշվի համար առաջարկվում են նաև «մողայի-կամետեր» խաղը։ Այդ խաղի համար պետք են գունավոր գնդիկներ և տախտակ փոսիկներով, վորոնց մեջ շարվում են գնդիկները։ Կարելի յն պատրաստել տախտակը պապյե մաշեյից, կավից, պլասելինից, գնդիկները՝ հացից կամ կավից, ձեռարվեստի ժամերին։ Մոպայիկան զարդացնում են յերեխայի համակցական (կոմբինատոր) ունակությունները, ծանոթացնում են զույներին և ձեւրին, համաշափության գաղափար և տալիս։

10 Հաշվի արկղներ.

Ֆաներից կամ հաստ ստվարաթղթից (կարտոն) պատրաստում են 10 առանձին արկղներ, վորոնց առ-




նկ. 7—8

ջեխ կողմն ավելի ցածր են հետեւի կողմից, ուր կանգնեցնում են քարտը։


Քարտերը նկարած թվապատկերներով դրվում են արկղերի մեջ։ Յերեխաներին տրվում են առանձին քը-

սակների կամ արկղերի մեջ՝ դանազան ժանր առարկաներ՝ լորի, կոճակ, մասուր, գունավոր գնդիկներ, և առաջարկվում են զնել արկղի մեջ, այնքան առարկա, վորոնց նշանակված քարտերի թվապատկերի վրա։

Ցանկալի յե քարտերի Փոնը սկ լինի, իսկ նշանները՝ բաց գույնի (սպիտակ)։ Գիտնական Լայը իր հետազոտությունների հիման վրա պնդում է, վոր սկ Փոտազուությունների համան վրա պնդում է, վոր սկ Փո-



նկ. 9



նկ. 10

նկարած սպիտակ առարկաներն ավելի լավ են տպագործի վրա սպիտակ առարկաներն ավելի լավ են տպագործի վրա։ Բացի այդ, նա խորհուրդ է տալիս նշանները գումարել ըստ յերկարության։

Յերբ յերեխաները սովորեն թվանշանները, նշան-
ների փոխարեն տրվում ե քարտեր՝ թվանշաններով:

Յերեխաները կարգում են թվանշանը և ըստ թվ-
անշանի՝ արկղը դնում համապատասխան թվով ա-
ռարկաներ:

Այդ աշխատանքն ինքնաստուգման միջոցով կա-
տարելու համար կարող են ծառայել նկ. № 5
պլակատները: Ստուգելու համար յերեխան համե-
մատում ե պլակատի թվանշանի հետ իր արկղի թվանշ-
անը հաշվում ե պլակատի վրա նկարած առարկանե-
րի թիվը և ըստ այնմ դնում արկղի մեջ:

11 Լուսու.

Սովարաթղթից քարտեր են պատրաստում, գծերով
քարտը բաժանում են հավասար քառակուսիների: Յու-
րաքանչյուր քառակուսու մեջ նկարում են վորոշ քա-
ռակով առարկաներ որինակ՝ 4 տանձ, 3 ճուտ, 2 խնձոր
և այլն: Նույն չափի քառակուսիների վրա կպցնում են
որացույցից կտրտած թվանշաններ (մինչև 10): Քար-
տերը բաժանում են խաղացողներին, մեկը կարգում ե
քառակուսիների վրա ըստ թվանշանները, մյուսները
դնում են իրենց քարտերում համապատասխան թվով
նկարած առարկաները և ծածկում: Ում քարտը չուտ
ծածկեց, նա խաղը տանում է:


12. Յերկրաչափական ձևերի լուսու.

Սովարաթղթից կտրել 6 քառակուսի՝ յուրաքան-
չյուրը 16 ք. սմ. և գծերով բաժանել 4 մասի:

3 քարտը գծերով բաժանում ե մանր քարտերի,
իսկ 3-ը մնում են տախտակի ձևով:

Քարտերի վրա փակցվում են զունավոր թուղթ
կամ նկարում յերկրաչափական ձևեր՝ քառակուսի:

յեռանկյուն, գիծ ևայլն, նույն ձևերը կրկնում են մանր
քարտերի վրա: Խաղում են չորս հոգի, յերեքը վերց-
նում են մեծ քարտերը, մեկ՝ մանր քարտերով արկղը,
քարտերը հանում են և անվանում ձեւ: Յերեխաները



նկ. 11

վնասում են իրենց քարտերի վրա այդ ձեւ և ծածկում
տախտակները: Ով չուտ ծածկեց իր քարտը նա խաղը
տանում է:

13. Թվանշանները սովորելուց հետո կարելի յետական թվանշաններով լուսութանք գործադրութեան ձեւի քառակուսիներ, կորտած քառակուսիների վրա գրել թվանշաններ՝ 2-ից 10, իսկ տախտակների վրա նկարել համապատասխան թվով նշաններ (թվապատկերներ):

Խաղը տարբառման նույն ձևութեան:


14. Դոմինոն: Այս խաղը կարելի յետական թվանշաններով հետութեան է: Դոմինոն կարող են պատրաստել իրենք յերեխանները:

15. 5 թիվն ըմբռնելուց հետո կարելի յետական թվանշաններով կարտում 6 քառակուսի՝ 20, 20 սմ.: Քառակուսիներից մեկին կըպահպահ են սպիտակ թուղթ և վրան դժում մանր քառակուսիներ 2 սմ.×2 սմ. մյուս 5 մեծ քառակուսիներին փակցնում են գունավոր թուղթ՝ 5 գույնի որինակ՝ գեղին, կանաչ, կապույտ, կարմիր, շագանակագույն և զին, կանաչ, կապույտ, կարմիր, շագանակագույն և առանութեան մեջ փոքրիկ քառակուսիների 2 սմ.: Առաջին քառակուսին տախտակ է: Մանր գունավոր քառակուսիները քաժանիլում են 5 յերեխայի մեջ, ըստ գույների: Յուրաքանչյուր խալացող հերթով դնում են տախտակին իր գույնը, ում հաջողվեց մի շարքի դնել 5 տակին իր գույնը, ում հաջողվեց մի շարքի դնել 5 տակին իր գույնը, ում հաջողվեց մի շարքի դնել 5 տակին իր գույնը, ում հաջողվեց մի շարքի դնել 5 տակին իր գույնը, ում հաջողվեց մի շարքի դնել 5 տակին իր գույնը, ում հաջողվեց մի շարքի դնել 5 տակին իր գույնը:

16. Զանազան գույնի թղթերից կտրտել շրջաններ՝ յերեք կոպեկանոցի չափ և շարքով կպցնել հաստ թղթի յերտերի վրա: Մեկի վրա մի շրջան, մյուսի վրա՝ յերշերտերի վրա: Այս կարող են ծանապարհը: Գունավոր քառակուսիները կարող են ծանապարհը: Գունավոր քառակուսիները կարող են ծանապարհը:

10. Բարտերի վրա պետք է փակցնել թվանշաններ 1-ից 10: Յերեխան վերցնում և մի վորուել թվանշան, յենթադրենք 7 (կամ թվապատկեր, յեթե յերեխան թվանշանները դեռ չի ճանաչում):

7 թվանշանի տակ դնում և մի չերտ՝ վորուել ու ուղարկ




Ակ. 12

Դ շրջաններով: Նրա տակ դնում են ըստ իր ցանկության մի շերտ, որինակ՝ չորս շրջանով, և պետք է ավելացնի այնքան շրջան, վոր լինի 7: Այդպիսով տալիս են 7 թվի մի քանի կոմբինացիա:

Այս խաղը ողնում են ըմբռնելու թվերի կազմը: Լուսոն պահելու համար պատրաստել արկդ՝ բաժամունքներով:

Ա. Մասում պահել թվանշանները, բ. մասը բաժամել առաջ քաժանմունք՝ թղթի շերտերը գտնավեկու համար:

Նախաղպրոցական հասակում կարելի յե հասկացողություն տալ ամբողջի և նրա մասերի մասին՝ կեռ և քառորդ: Խաղի և աշխատանքի ընթացքում յերեխաները կիսում են, բաժանում են չորս մասի-խնձորը, թուղթը, պարանը, տախտակը, խաղին մասնակցող ընկերներին: Կշեռքի վրա նրանք կարող են հավասար չտփով բաժանել մի կիլո բրինձը, շաքարը և այլն: Կոտորակները յուրացնելու համար կարելի յե սովորա-



Ակ. 13

թղթից պատրաստել յերկու շրջան: Մի շրջանը բաժանել յերկու մասի և մասերը ներկել նույն դույնով, մյուսն շրջանը բաժանել չորս մասի և նույնպես ներկել

նույն դույնով: Նույնը կատարել և քառակում ձեր գետ: Շաբեկով մասերը, յերեխան պատկերացնում են, վոր և քառորդից կամ յերկու կեսից սուացվում են մի ամբողջ, վոր յերկու քառորդը հավասար են կեսի:

Մանկապարտեզում անհրաժեշտ են ունենալ կշեռք, մետր, ժամացույց, ջերմաչափ, որացույց:

Զեռարգեստի ժամին յերեխաներն իրանք կարող են համբիչ պատրաստել, տախտակի կտորներից շրջանակ շինել, թելի դատարկ կոնկերի ծայրերը ողոցով կտրել, ներկել վորես գույնի արծնաներկով հագցնել. պինդ յերկաթալարի վրա և ամրացնել շրջանակի մեջ:

Յերեխաները զնկավարի ոգնությամբ կարող են պատրաստել նաև ժամացույց՝ շարժական ոլաքով:

Ցանկալի յե ունենալ մանկապարտեզում կարունի վրա տպած դրամներ, զանազան արժողության՝ մի կոպեկանոց, յերկու կոսկեկանոց, յերեք կոպ. հինգ կոպ., տաս կոպ., : Յերեխային տրվում ե վորես դրամ յենթաղրենք 10 կոպեկանոց և առաջարկվում ե փոխարինել մի քանի մանր արժողության դրամներով, ընդհակառակը նույն վարժությունը կարելի յե անել նաև փոստի մարկաներով:



ԳԻՆԵ ՅՈ ԿՈՎ.

54

Математика
в дошкольном заведении
методическое руководство
для руководителей детсадов
сост. С. Самвелян
Госиздат ССР Армении, Эреванъ, 1988

ՀՀ Ազգային գրադարան



NL0246973

